Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 10-ի N 785 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՀԱՐԳՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՀԱՐԳԱԴՐՈՇՄՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների (այսուհետ՝ սարքավորումներ) փորձաքննության իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սարքավորումների փորձաքննությունն անցկացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մետաղափորձական վերահսկողության տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն)՝ դիմող իրավաբանական անձի (այսուհետ՝ կազմակերպություն) ներկայացուցչի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա ներկայացուցչի (ներկայացուցիչների) մասնակցությամբ:

3. Սարքավորումների փորձաքննության աշխատանքներն իրականացվում են դիմումը տեսչություն մուտքագրվելու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում: Փորձաքննությունն անցկացվում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության իրականացման վայրում՝ նրա ղեկավարին կամ պաշտոնատար անձին փորձաքննության աշխատանքներն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ տեղյակ պահելուց հետո:

4. Սարքավորումների փորձաքննության համար կազմակերպությունը տեսչության ներկայացուցչին (ներկայացուցիչներին) է ներկայացնում տվյալ արտադրության համար անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական անձնագրերը, հարգորոշման ու հարգադրոշմման տեխնոլոգիական գործընթացը հաստատող փաստաթղթերը, կարգագրերը:

5. Սարքավորումների փորձաքննության համար տեսչությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրել համապատասխան մասնագետներ:

6. Տեսչության ներկայացուցիչը (ներկայացուցիչները) և հրավիրված մասնագետները կարող են ուսումնասիրել սարքավորումներ, օժանդակ արտադրության միջոցներ և փաստաթղթեր:

7. Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը՝ համաձայն ձևի, կազմում և ստորագրում է (են) տեսչության ներկայացուցիչը (ներկայացուցիչները) և հրավիրված մասնագետը (մասնագետները)՝ դրանց մասնակցության դեպքում: Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը կազմվում է 3 օրինակից, 2 օրինակը տրամադրվում է տվյալ տնտեսավարող սուբյեկտին, իսկ մեկ օրինակը՝ տեսչությանը:

8. Փորձաքննությանը մասնակցած մասնագետներից որևէ մեկի հատուկ կարծիքի առկայության դեպքում այն հավելվածի տեսքով կցվում է սարքավորումների փորձաքննության եզրակացությանը:

9. Սարքավորումների փորձաքննության եզրակացությունը հաստատվում է տեսչության պետի կողմից՝ հետևյալ որոշումներից մեկի գրառմամբ՝

1) համապատասխանում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության

կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին.

2) չի համապատասխանում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

10. Սարքավորումների փորձաքննության բացասական եզրակացության մեջ հստակ նշվում են այն սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացի անվանումները, որոնք չեն ապահովում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ նշելով համապատասխան իրավական ակտի դրույթները: Անհամապատասխանությունների վերացման դեպքում փորձաքննությունը կատարվում է ընդհանուր սկզբունքներով:

11. Փորձագիտական եզրակացության հետ չհամաձայնելու դեպքում տվյալ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է բողոքարքել վարչական կարգով՝ վերադասության սկզբունքով, ինչպես նաև դատական կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Հաստատում եմ
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության մետաղափորձական
վերահսկողության տեսչության պետ
_____
____ _____ 20 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

____ _____ 20 թ.

_____
(պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը)

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող Սարքավորումների

Փորձաքննության արդյունքները

Կազմակերպության անվանումը _____
Սարքավորումները _____
_____
(համապատասխանում են կամ չեն համապատասխանում

«Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1916-Ն որոշմամբ նշել հոդվածները և մասերը)

Փորձաքննության մասնակիցներ

Տեսչության ներկայացուցիչ (ներկայացուցիչներ) _____
_____
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Հրավիրված մասնագետներ _____
_____
_
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ

11_0785.doc